

**Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը համալրելու մրցույթի անցկացման  
գրավոր փուլի  
ՀԱՐՑԱՇԱՐ**

1. Արցախի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է...

- **Ժողովրդին:**

ԱՀ Սահմանադրություն, հոդված 2

2. Արցախի Հանրապետության Նախագահի ընտրությունները անցկացվում են..

- **Ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:**

ԱՀ Սահմանադրություն, հոդված 7

3. Ո՞ր նորմատիվ փաստաթղթով է սահմանվում դասի տևողությունը:

- **Դասի տևողությունը սահմանվում է հանրակրթության պետական չափորոշիչով:**

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17.3

4. Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունը...

- **Անվճար է**

ԱՀ Սահմանադրություն, հոդված 38.1

5. Կրթության ո՞ր աստիճան է պարտադիր:

- **Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:**

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 4

6. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն...

- **Ազգային դպրոցն է:**

«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 4.2

7. Ազգային դպրոցի գլխավոր նպատակը...

- **Մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:**

«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 4.2

8. Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է

- **Օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով:**

«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 14.2

9. Օրինակելի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է...

- **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:**

«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 14.2

10. Նշված հանրակրթական հիմնական ծրագրերից ո՞րը պարտադիր է.

նախադպրոցական կրթական ծրագրի ը

11. Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը...
  - **Հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է:**  
«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 32.1
12. Հանրակրթական հիմնական ծրագրերն...
  - **Ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի և դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջությունն է:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.1
13. Հանրակրթական պետական ծրագրի օրինակելի ուսումնական պլանը կազմված է ...
  - **Պետական և դպրոցական բաղադրիչներից:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5
14. Պետական բաղադրիչը ներառում է...
  - **Առարկայացանկը և դրան հատկացվող ժամաքանակները:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5.1
15. Դպրոցական բաղադրիչին հատկացված ժամաքանակը նախատեսված է...
  - **Հոսքային կամ առանձին առարկաների խորացված կրթական ծրագրերի իրականացման և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5.2
16. Դպրոցական բաղադրիչը տնօրինում է...
  - **Ուսումնական հաստատությունը:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5.2
17. Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն օրինակելի ուսումնական պլանի հիման վրա հաստատում է...
  - **Իր ուսումնական պլանը:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 7.5.2
18. Ուսումնական տարին բաղկացած է ...
  - **Ուսումնական շաբաթներից, քննաշրջաններից և արձակուրդներից:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.2
19. Պետական ուսումնական հաստատության ուսուցչի մեկ դրույքի լրիվ ուսումնական ծանրաբեռնվածությունը (դասավանդման ծավալը) չի կարող գերազանցել ...
  - **Շաբաթական քսաներկու դասաժամը:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 25.3
20. Ուսումնական շաբաթների թիվը սահմանվում է ...
  - **Հենքային ուսումնական պլանով:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.3
21. Պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է ...
  - **Ուսումնական հաստատությունը՝ օրենքով սահմանված ժամկետում համաձայնեցնելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.4

22. Ոչ պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է...
- **Հիմնադիրը՝ օրենքով սահմանված ժամկետում համաձայնեցնելով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հետ:**  
«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 15.4
23. ԼՂՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն...
- **Գրական հայերենն է:**  
«Լեզվի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 2, մաս-1
24. Ո՞վ է համարվում երեխա:
- **Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:**  
«Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք, հոդված 1
25. Ի՞նչ է ստուգում և ուսումնասիրում Կրթության պետական տեսչությունը:
- **Նախադպրոցական, հանրակրթական հիմնական, հատուկ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կրթական գործունեությունը՝ անկախ կազմակերպատիրավական ձևից և ենթակայությունից:**  
«Կրթության պետական տեսչության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 9, մաս 1
26. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության բնագավառում պետական կառավարման տարածքային մարմնների իրավասություններից է...
- **Վկայագրել երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:**  
«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 19
27. Հանրակրթության ոլորտում միջազգային կրթական ծրագրերի առանձնահատկությունները ո՞ր օրենքով է սահմանվում:
- **«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքով:**  
«Լեզվի մասին» ԼՂՀ օրենք, հոդված 2, մաս-4
28. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է...
- **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:**  
«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 10.1
29. Ամենամյա արձակուրդը լինում է...
- **Նվազագույն, երկարացված և լրացուցիչ:**  
«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», հոդված 158 .2
30. Ո՞ր դեպքում ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով:
- **Կողմերի համաձայնությամբ:**  
«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», հոդված 163
31. Ո՞րն է համարվում աշխատանքային կարգապահության խախտում:

- Աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:  
«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», հոդված 220
- 32. Ո՞ր դեպքում է կարգապահական տույժը համարվում մարված:
  - Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, աշխատողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի:  
«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», հոդված 229
- 33. Ո՞ր դեպքում կարգապահական տույժը կարող է հանվել:
  - Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:  
«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», հոդված 230
- 34. Ո՞րն է համարվում ձեռնարկատիրական գործունեություն:
  - Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:  
«ՀՀ քաղաքացիական օրենսգիրք», հոդված 2
- 35. Իրավական ակտերն իրենց բնույթով լինում են...
  - Նորմատիվ, անհատական (ոչ նորմատիվ) կամ ներքին (լոկալ):  
«Իրավական ակտերի մասին» ԼԳ՝ օրենք, հոդված 2.2
- 36. Ո՞ր տարիքը լրանալուց հետո է առաջանում վարչական պատասխանատվություն:
  - Վարչական պատասխանատվության ենթակա են այն անձինք, որոնց տասնվեց տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը:  
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, հոդված 12
- 37. Իրավական ակտը համարվում է նորմատիվ
  - Եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:  
«Իրավական ակտերի մասին» ԼԳ՝ օրենք, հոդված 2.3
- 38. Ո՞րն է հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը:
  - Հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է:  
«ԼԳ՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 30
- 39. Դասի տևողությունը սահմանվում է...
  - Հանրակրթության պետական չափորոշիչով:  
«ԼԳ՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 30

40. Հանրակրթական դպրոցն օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը բաշխում է...

- **Պետական բաղադրիչով սահմանված, նախարարության կողմից երաշխավորված կամ հանրակրթական դպրոցի կողմից մշակված և նախարարության կողմից հավանություն ստացած առարկաներին:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 33

41. Ո՞րն է հանրակրթական դպրոցի կոլեգիալ կառավարման մարմին:

- **Խորհուրդը:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 49

42. Ո՞ր մարմնի սահմանած կարգով է ձևավորվում խորհուրդը:

- **Խորհուրդը ձևավորվում է նախարարության սահմանած կարգով:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 50

43. Խորհրդի անդամների թեկնածուներ առաջադրում են...

- **Մանկավարժական խորհուրդը, ծնողական խորհուրդը, տարածքային կառավարման մարմինը, նախարարությունը և տեղական ինքնակառավարման մարմինը:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 53

44. Կառավարման ո՞ր մարմնի պահանջով և խորհրդի անվանական կազմի հաստատումից հետո ի՞նչ ժամկետում է գումարվում խորհրդի առաջին նիստը:

- **Տարածքային կառավարման մարմնի պահանջով՝ յոթնօրյա ժամկետում:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 57

45. Ձայների ի՞նչ հարաբերակցությամբ և քվեարկության ի՞նչ ձևով է ընտրվում խորհրդի նախագահը:

- **Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, փակ քվեարկությամբ:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 58

46. Ու՞մ կողմից են գումարվում խորհրդի նիստերը

- **Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, տնօրենի, խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:**

«ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 61

47. Հանրակրթական դպրոցի տնօրենը ի՞նչ կարգավիճակով է մասնակցում խորհրդի նիստերին:

- **Խորհրդակցական ձայնի իրավունքով:**

48. Ի՞նչ ժամկետներում են գումարվում մանկավարժական խորհրդի նիստերը:
- Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են ամսական երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր՝
    - 1) տնօրենի նախաձեռնությամբ.
    - 2) մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ.
    - 3) նախարարության և (կամ) տարածքային կառավարման մարմնի, Ստեփանակերտի քաղաքապետի նախաձեռնությամբ:
- «ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 84
49. Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումն ապահովում է...
- Հանրակրթական դպրոցի տնօրենը:
- «ԼՂՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»  
ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 89
50. Հանրակրթության պետական չափորոշիչը մշակում է...
- Կրթության պետական կառավարման լիազոր մարմնը:
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 2, կետ 3
51. Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատում է...
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 3, կետ 5
52. Առարկայական չափորոշիչը հաստատում է...
- Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ, բաժին 3, կետ 6
53. Ինչպե՞ս է սահմանվում ,ուսուցիչե հասկացությունը:
- Ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող:
- «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3. կետ 13
54. Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցչի վերապատրաստում» հասկացությունը:
- Վերապատրաստող կազմակերպություններում ուսուցչի կողմից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած՝ ուսուցչի վերապատրաստման

չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան մասնագիտական նոր գիտելիքների, հմտությունների և ունակությունների յուրացում ու կատարելագործում:

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26.10

55. Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցչի ատեստավորում» հասկացությունը:

- Ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների՝ զբաղեցրած պաշտոնին համապատասխանության որոշման գործընթաց:

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 3.14

56. Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցչի որակավորման տարակարգ» հասկացությունը:

- Ուսուցչի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ու կարողություններին համապատասխանող որակավորման չափանիշ:
- 

«Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 26.24

57. Ի՞նչ է ուսուցման մեթոդը:

- Մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն:

( Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., , 2004. գլ. 2– 180 էջ)

58. Ինչո՞վ է պայմանավորված դասի ընթացքում կիրառվող մեթոդների ընտրությունը:

- Դասի նպատակով:
- 

( Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004. գլ. 2– 180 էջ)

59. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

- էքսկուրսիա:

(գլ. V, Դույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ)

60. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

- Ցուցադրում:

(գլ. V, Դույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ)

61. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

- Դիտում:

(գլ. V, Դույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Զանգակ-97, 2005թ., 464 էջ)

62. Նշվածներից ո՞րն է զննական մեթոդ:

• **Իլյուստրացիա:**

(զլ. V, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:  
Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:  
Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)

63. Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:  
• **Ջրույց:**

(զլ. V, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:  
Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:  
Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)

64. Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:  
• **Դասախոսություն:**

(զլ. V, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:  
Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:  
Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)

65. Նշվածներից ո՞րն է խոսքային մեթոդ:  
• **Աշխատանք դասագրքով**

(զլ. V, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:  
Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:  
Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)

66. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:  
• **Վարժություններ:**

(զլ. V, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:  
Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:  
Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)

67. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:  
• **Գործնական աշխատանքներ:**

(զլ. V, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:  
Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:  
Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)

68. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:  
• **Լաբորատոր աշխատանքներ:**

(զլ. V, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:  
Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:  
Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)

69. Նշվածներից ո՞րն է գործնական մեթոդ:  
• **Ճանաչողական խաղեր:**

(զլ. V, Ղույունչյան Գ. Ե. /Մանկավարժություն:  
Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:  
Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)

70. Ո՞ր խմբերը կարելի է համարել համագործակցային:  
• **Այն խմբերը, որի անդամները գիտակցում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից:**

(զլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս.,  
Խրիմյան Ս., Պետրոսյան Մ. / Մասնագիտական զարգացման  
ծեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.Կրթության  
ազգային ինստիտուտի հրատ., 2004.– 180 էջ)



71. Ի՞նչ ենք հասկանում ակտիվ ուսումնառություն ասելով:
- Ակտիվ ուսումնառության ընթացքում սովորողները սոսկ խոսքով կամ տեսողական տեղեկատվություն ստանալու փոխարեն դառնում են և՛ մասնակից, և կատարող:
- (Բաժին 1, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., էլոյան Ն., Շահրոքի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՌԵՔՍ, Երևան, 2003թ., 296 էջ)
72. Ի՞նչ ենք հասկանում ուսուցում ասելով:
- Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է:
- (զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)
73. Ի՞նչ ենք հասկանում կարողություն ասելով:
- Կարողությունները գիտելիքներն են գործողության մեջ:
- (զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)
74. Ի՞նչ ենք հասկանում հմտություն ասելով:
- Հմտությունները կարողությունների կառուցվածքում ձևավորված գործունեության առանձին դրսևորումների ավտոմատացված տարրերն են:
- (զլ. V, Ղույունյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)
75. Նշվածներից ո՞րի միջոցով է իրականացվում սովորողների առաջադիմության կիսամյակային գնահատումը 2-12-րդ դասարաններում:
- Միավորային գնահատման:
- (Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն/, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ.)
76. Ի՞նչն է բնորոշ համագործակցային ուսուցմանը:
- Առավել արդյունավետ պայմանների առկայությունը սոցիալական հմտությունների ձևավորման համար:
- (զլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.– 180 էջ)
77. Ո՞րն է սովորողների գնահատման գլխավոր նպատակը:
- Կրթության որակի բարելավումը:
- (Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն/, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ.)

78. Ի՞նչ ենք հասկանում հավակնությունների մակարդակ ասելով:
- **Արդյունքների այն մակարդակը, որին ցանկանում է մարդը հասնել տվյալ ժամանակահատվածում, տվյալ գործունեությունն իրականացնելիս:**  
(Գլ. 13, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. , Հոգեբանե հրատարակչություն, 1997թ., 648 էջ)
79. Նշվածներից ո՞րն է արտահայտում <<նպատակ>> (դասի, գործունեության) հասկացության բովանդակությունը:
- **Նպատակը ցանկալի և նախապես կանխատեսելի վերջնական արդյունքն է:**  
(գլ. V, Ղույումջյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)
80. Ի՞նչ ենք հասկանում կազմակերպության առաքելություն ասելով:
- **Առաքելությունը կազմակերպության համար ցանկալի ապագայի մտապատկերն է:**  
(Բաժին 2, Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., էլոյան Ն., Շահրոբի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում: Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՈՒԵՔՍ, Երևան, 2003թ., 296 էջ)
81. Ո՞ր հատկությունն է բնորոշ գրեթե բոլոր դեռահասներին:
- **Ինքնուրույն լինելու ձգտումը:**  
(գլ. III, Ղույումջյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան, Հոգեբանե հրատարակչություն, 1997թ., 648 էջ)
82. Ի՞նչ է նշանակում վճիռ կայացնել:
- **Առաջնությունը տալ լուծումներից մեկին, մյուսները ձնշել, հեռացնել վարքի ոլորտից:**  
(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. , Հոգեբանե հրատարակչություն, 1997թ., 648 էջ)
83. Ի՞նչ ենք հասկանում գործունեություն ասելով:
- **Գործունեությունը գործողությունների շղթա է, որը միավորված է միասնական նպատակով և դրդապատճառներով:**  
(Գլ. 9, Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. , Հոգեբանե հրատարակչություն, 1997թ., 648 էջ)
84. Պատիժը ինչի՞ն պետք է ուղղված լինի:
- **Շեղումների կանխարգելմանը և ոչ մի դեպքում անձի նսեմացմանը:**  
(գլ. III, Ղույումջյան Գ. Ե. /Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Եկու գրքով: Գիրք I, Գիրք II /- Եր.: Ջանգակ-97, 2005թ., 464 էջ)
85. Ի՞նչ ենք հասկանում վարք ասելով:
- **Վարքը գործունեության արտաքին, առարկայական, դիտման համար մատչելի դրսևորումն է:**

86. Ի՞նչ փուլերից է բաղկացած սթրեսը:

- **Տագնապ, դիմադրություն, սպառում:**
- 

87. Ի՞նչ է սահմանում հանրակրթության պետական չափորոշիչը :

- **Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական պահանջները և սովորողների գնահատման համակարգը:**

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 1)

88. Ու՞մ համար են պարտադիր հանրակրթության պետական չափորոշիչի նորմերը և դրույթները:

- **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության կառավարման մարմինների, տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր, հատուկ և մասնագիտացված հանրակրթական ծրագրեր (այսուհետ՝ հանրակրթական ծրագրեր) մշակողների և իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ու սեփականության ձևերից և ենթակայությունից :**

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 3)

89. Հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան՝

- **Մշակվում են պետական և այլընտրանքային հանրակրթական ծրագրերը:**

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.1)

90. Հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան՝

- **Փորձաքննության են ենթարկվում հաստատման ներկայացված այլընտրանքային հանրակրթական ծրագրերը:**

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.2)

91. Հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան՝

- **Կազմակերպվում են հանրակրթական ծրագրերի իրականացումը և դրա պետական վերահսկողությունը:**

(Հանրակրթության պետական չափորոշիչ, ընդհանուր դրույթներ, կետ 2.3)

92. Հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան՝

- **Գնահատվում են հանրակրթության արդյունքները:**

93. Ինչպե՞ս է ներկայացվում միջնակարգ կրթության ծրագրերի բովանդակությունը:

- Միջնակարգ կրթության ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է առարկայական ծրագրերի միջոցով և հանրակրթության պետական չափորոշիչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները:

(Հանրակրթության պետական չափորոշիչ, բաժին 5, կետ 10)

94. Նշվածներից ո՞րն է ուսումնական բնագավառի ներկայացման կրթության բովանդակային բաղադրիչներից:

- **Կարողությունները և հմտությունները:**

(գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.– 180 էջ)

95. Նշվածներից ո՞րն է ուսումնական բնագավառի ներկայացման կրթության բովանդակային բաղադրիչներից:

- **Արժեքային համակարգը:**

(գլ. 2, Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.– 180 էջ)

96. Ո՞րն է կոլեկտիվ ուսուցման կազմակերպման դեպքում ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունը:

- **Տարբեր աշակերտներ կարող են զբաղվել տարբեր ուսումնական առարկաներով, ընդմիջումներ անել տարբեր ժամանակահատվածներում:**

(Մ.Ա.Մկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը; Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բյուրակն» կրթական համալիր; Երևան 2009թվական)

97. Կոլեկտիվ ուսուցման կազմակերպման դեպքում որո՞նք են ուսումնական խմբի անդամի գործունեության առանձնահատկությունները:

- **Սովորող է, սովորեցնող և աշխատանքի կազմակերպող:**

(Մ.Ա.Մկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը; Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բյուրակն» կրթական համալիր; Երևան 2009թվական)

98. Ո՞վ է ի պաշտոնե պարտավոր ապահովելու աշխատողների առողջությունն ու անվտանգությունը:

- **Աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն:**

99. Որքան պետք է լինի աշակերտների թվաքանակը դպրոցում:

- Այն չպետք է գերազանցի տվյալ շենքի կառուցման կամ վերակառուցման նախագծով սահմանված թվաքանակը:

Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N 2.III.4-2...մաս 3.կետ 6

100. Ինչպե՞ս է հաշվառվում ուսումնական սենյակների(դասասենյակներ) տարածքը:

- Ուսումնական սենյակների (դասասենյակներ) տարածքը հաշվառվում է ելնելով 1 աշակերտի համար 2մ<sup>2</sup>:

Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N 2.III.4-2...մաս 3.կետ 11

### Օգտագործված փաստաթղթերի և գրականության ցանկ

1. ԼՂՀ Սահմանադրություն
2. «Կրթության մասին» ԼՂՀ օրենք
3. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ԼՂՀ օրենք
4. ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրք»
5. ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք»
6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգիրք
7. «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենք
8. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենք
9. «Լեզվի մասին» ԼՂՀ օրենք
10. «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք
11. «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենք
12. «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենք
13. «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք
14. «Կրթության պետական տեսչության մասին» ԼՂՀ օրենք
15. ԼՂՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչության կանոնադրություն
16. «ԼՂՀ պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն
17. «ԼՂՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ
18. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի» կարգ
19. Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ
20. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ
21. Հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի ուսումնական պլաններ
22. Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N 2.III.3-2...

### Մանկավարժության և հոգեբանություն

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդադյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ./ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար/ - Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2004.— 180 էջ:

2. Բաղդասարյան Ա., Միքայելյան Օ., Նազարյան Ա. /Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն/, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, 2008թ.:
3. Գրիգորյան Յու., Մինասյան Հ. /Հանրակրթական դպրոցի ֆիզիկական կուլտուրայի առարկայի չափորոշիչ և ծրագիր 1-12-րդ դասարաններ/ ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան 2007թ.:
4. Խրիմյան Ս., Հովսեփյան Ա., Մելքոնյան Մ., էլոյան Ն., Շահրոբի Ֆ. /Դպրոցի ղեկավարում և կառավարում; Ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, ԱՅՈՒԵՔՍ, Երևան, 2003թ, 296 էջ;
5. Հանրակրթության պետական չափորոշիչ (նոր խմբագրությամբ` 1088-Ն, 28.07.2011թ. );
6. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. /Համագործակցային ուսուցում; Ձեռնարկ / - Եր.; Անտարես, 2006 թ., 124 էջ;
7. Ղույունջյան Գ. Ե. /Մանկավարժություն; Դասագիրք բուհերի համար; Եկու գրքով; Գիրք 1, Գիրք 11 /- Եր.; Ջանգակ-97, 2005թ., 464 էջ;
8. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Երևան. ,Հոգեբանե հրատարակչություն, 1997թ., 648 էջ;
10. Մ.Ա.Մկրտչյան /Կոլեկտիվ ուսուցման տարրերը; Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության <<Բյուրակն>> կրթական համալիր;Երևան 2009թվական;

**Ռեսուրսային հաստատության դաստիարակի թափուր տեղը համալրելու մրցույթի անցկացման գրավոր փուլի**

**ՀԱՐՑԱՇԱՐ**

**1. Նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունն է.**

- *խաղը*

Հիմք՝ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Վ.Պետրովսկու խմբագրությամբ, Ա. Ա. Նալչաշյանի թարգմանությամբ, „Լույս“ հրատարակչություն, 1977թ.:

**2. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթական հաստատության դաստիարակի պարտականությունը.**

- *պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը*

Հիմք՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը նախադպրոցական կրթության մասին», սեպտեմբերի 27, 2006թ., գլուխ 1 :

**3. Ինտերակտիվ՝ թարգմանաբար նշանակում է.**

- *փոխգործուն*

Հիմք՝ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004թ.:

**4. Նշված հանրակրթական հիմնական ծրագրերից ո՞րը պարտադիր չէ.**

- *նախադպրոցական կրթական ծրագիրը*

Հիմք՝ «Կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 16:

**5. Նշե՛ք «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենքի գործողության շրջանակները.**

- *Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչև 18 տարեկան անձանց վրա*

Հիմք՝ «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 1:

**6. Տարվա կտրվածքով մանկապարտեզի կրթադաստիարակչական աշխատանքները կարգավորող փաստաթուղթ.**

- *տարեկան աշխատանքային պլան*

**Հիմք՝** <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-Ա/Ք հրաման:

**7. <<Լեզվի մասին>> ԼՂՀ օրենքի համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն՝**

- *գրական հայերենն է*

**Հիմք՝** <<Լեզվի մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 2:

**8. ԳՈՒՄ նշանակում է՝**

- *գիտել, ուզում եմ իմանալ, սովորեցի*

**Հիմք՝** Երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը 3, 4 և 5 տարեկան երեխաների համար, <<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամ, Երևան, 2004թ.

**9. Նշվածներից ո՞րը երեխայի հիմնական իրավունքը չէ.**

- *երեխայի ընտրելու իրավունքը*

**Հիմք՝** <<Երեխայի իրավունքների մասին>> ԼՂՀ օրենք:

**10. Դաստիարակի թղթապանակի համար անհրաժեշտ փաստաթղթեր՝**

- *պլանավորման և հաշվառման տեսր, ինքնակրթության տեսր, ծնողական ժողովների արձանագրությունների տեսր*

**Հիմք՝** <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, ԿԳՆ, 2010թ, 21.01 N05-Ա/Ք հրաման:

**11. Աշխատանքային պայմանագիր կնքելիս կողմերի միջև փորձաշրջան կարող է սահմանվել**

**(նշե՛ք սխալ պատասխանը)**

- *եթե աշխատանքի են ընդունվում ընտրովի պաշտոն զբաղեցնողները, ինչպես նաև պաշտոնի նշանակման համար որակավորման քննություններ հանձնած անձինք*

**Հիմք՝** ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 91:

**12. ԽԻԿ նշանակում է՝**

- *խթանում, իմաստի ընկալում, կշռադատում*

**Հիմք՝** Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004թ.:

**13. ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի**



*Ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝*

*(նշե՛ք սխալ պատասխանը)*

*- աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում*

**Հիմք՝** ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 113:

**14. Դաստիարակի աշխատանքի պլանավորման հիմնական բաղադրիչներն են՝**

*- մարմնամարզություն, դիտում, աշխատանք, խաղ, պարապմունք, աշխատանք ծնողների հետ, անհատական աշխատանք*

**Հիմք՝** «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-Ա/Ք հրաման:

**15. «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն մինչև 6 տարիքն է համարվում նախադպրոցական տարիք.**

*- մինչև 6 տարեկանը*

**Հիմք՝** «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 2:

**16. Գրաճանաչության, մաթեմատիկայի, արվեստի, շինարարության, խոհարարության, դերային խաղի, բնագիտության, տեխնիկական, սպորտի կենտրոնները միասին կոչվում են.**

*- զարգացնող միջավայր*

**Հիմք՝** Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, Երևան, ՄԱԿ- մանկական հիմնադրամ, 2011թ.:

**17. Աշխատանքային կարգապահության խախտում համարվում է՝**

*- աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը*

**Հիմք՝** ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 220:

**18. Մանկապարտեզում պարապմունքներն անցկացվում են՝**

*- շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի /կանոնակարգի/ համաձայն*

**Հիմք՝** Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2010թ.:

**19. Ո՞ր ժամերին և ում հաշվին է կատարվում պարտադիր բժշկական զննումը**

*- աշխատանքային ժամերին՝ գործատուի հաշվին*

**Հիմք՝** ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 249, կետ 6:

**20. Նախադպրոցականի մտավոր զարգացման և դաստիարակության հիմքը հանդիսանում է՝**

- զգայական դաստիարակությունը

**Հիմք՝** <<Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր>>, ԿԳՆ, 27. 10. 2011թ. N 1192-Ս/Ք հրաման:

**21. Ներքոնշյալներից ո՞րը <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունն է.**

- նախադպրոցական կրթության նպատակը

**Հիմք՝** <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 2:

**22. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության ոլորտում ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների իրավունք.**

- մասնակցել նախադպրոցական կրթության գործընթացին

**Հիմք՝** <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 28:

**23. Այս երևույթը բնութագրվում է աճող սերնդի հոգեկան գործընթացների առավել ինտենսիվ զարգացմամբ /արագընթաց ֆիզիկական և սեռային հասունացում, տեղեկատվական հոսքի կտրուկ ավելացում.../՝**

- արսելերացիա

**Հիմք՝** Ս. Մարության, Ա.Դավլաթյան - <<Նախադպրոցական մանկավարժություն>>, 2005, ուսումնական ձեռնարկ:

**24. Մտագրոհը համարվում է՝**

- փոխգործուն մեթոդ

**Հիմք՝** <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-Ս/Ք հրաման:

**25. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում օդային բարվոք միջավայր ստեղծելու համար իրականացվող օդափոխությունը դադարեցվում է երեխաների խմբասենյակ վերադառնալուց**

- 30 րոպե առաջ

**Հիմք՝** Նախադպրոցական կազմակերպությունների (մանկամուր, մանկապարտեզ, մուր-մանկապարտեզ) սանիտարական նորմեր և կանոններ, N 2.III-1 (Գրանցված է արդարադատության նախարարության կողմից 27 դեկտեմբերի 2002թ.. պետական գրանցման թիվ 10002415):

**26. Ուսուցման այդ սկզբունքներն ապահովում են երեխայի զարգացումը, տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը և համարվում են՝**

- ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայի հիմնարար սկզբունքներ

Հիմք՝ «Նախադպրոցական մանկավարժություն», 2005թ., ուսումնական ձեռնարկ:

**27. Նախադպրոցական կազմակերպությունների հիմնական շինությունները պետք է ունենան՝**

- անմիջական բնական լուսավորում

Հիմք՝ Նախադպրոցական կազմակերպությունների (մանկամտուր, մանկապարտեզ, մտուր-մանկապարտեզ) սանիտարական նորմեր և կանոններ, N 2.III-1 (Գրանցված է ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից 17 հոկտեմբերի 2008թ., պետական գրանցման թիվ 983):

**28. Ձախլիկությունը զարգացման առանձնահատկություն է, որը պայմանավորված է՝**

- ուղեղի կիսագնդերի գործունեությամբ

Հիմք՝ «Ձախլիկների զարմանահրաշ աշխարհը», Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009թ.:

**29. Նախադպրոցական ուսումնական հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են՝**

- Հաստատության և ծնողների միջև կնքվող պայմանագրով

Հիմք՝ «ԼՂՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, գլուխ IV, կետ 26:

**30. Լոգոպեդական խաղերը միտված են՝**

- երեխաների խոսքի շտկողական աշխատանքների իրականացմանը

Հիմք՝ «Լոգոպեդական խաղեր», ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ 2009թ.:

**31. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակը**

- դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6:

**32. Մատների վարժությունները նպաստում են հոգեկան գործընթացներից՝**

- ուշադրության, հիշողության զարգացմանը

Հիմք՝ «Հրաշք մատիկներ» - Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, 2010թ.:

**33. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակ.**

- Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6:

**34. Բառի հնչյունային վերլուծություն կատարելու կարողության խնդիրը համարվում է**

- գրաճանաչության նախապատրաստման կարևորագույն խնդիր

**Հիմք՝** Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում, մեթոդական ձեռնարկ, Երևան, 2007թ.:

**35. Ո՞ր մարմինն է սահմանում նախադպրոցական ուսումնական հաստատության խմբերի խտությունը.**

- կրթության պետական կառավարման լիազորված մարմինը

**Հիմք՝** <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 10:

**36. Երեխայի մտածողությունը խթանող հարցերը կոչվում են՝**

- բաց հարցեր

**Հիմք՝** <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, ԿԳՆ, 2010թ. 21.01 N05-Ա/Ք հրաման:

**37. Ո՞րն է նախադպրոցական կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի լիազորությունը.**

- մշակում, հաստատում և ներդնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները

**Հիմք՝** <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 16:

**38. Ուսուցման այդ ձևը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով.**

- թեմատիկ ուսուցում

**Հիմք՝** Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2010թ.:

**39. Ո՞րն է նախադպրոցական կրթության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունը.**

- ապահովում է նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը

**Հիմք՝** <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 17:

**40. Բառերի բոլոր հնչյունների ճիշտ արտասանությունը, տրամաբանական շեշտերի տեղին օգտագործումը, ձայնի ուժի և խոսքի տեմպի կարգավորումն ապահովում են մայրենի լեզվի ուսուցման կարևորագույն խնդիրներից՝**

- հնչարտաբերական ունակությունների զարգացումը

**Հիմք՝** Մ. Բաղդասարյան - <<Ճիշտ արտասանության ձևավորումը նախադպրոցական տարիքում>>, 1988թ.:

**41. Ո՞ր նորմատիվ փաստաթղթով է սահմանվում նախադպրոցական կրթության բովանդակությունը.**

- նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով

**Հիմք՝** <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 21:

**42. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակ.**

- երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը

**Հիմք՝** <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 6:

**43. Այդ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, և դրանք հիմնականում անց են կացվում դաստիարակի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքների միջոցով.**

- դիդակտիկ խաղեր

**Հիմք՝** Մայրենի լեզվի դիդակտիկ խաղեր, Երևան, 2007թ.:

**44. Նախադպրոցական կրթական հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն՝**

- նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում

**Հիմք՝** <<ԼՂՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն, գլուխ IV, կետ 28:

**45. ԲՄՏ նշանակում է՝**

- բազմաբնույթ մտածողության տեսություն

**Հիմք՝** Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում, Այոեքս, Երևան, 2004թ.:

**46. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք իրավունք ունեն կրթական ծրագրերին, իրենց զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան ստանալու՝**

**(նշե՛ք սխալ պատասխանը)**

- նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն և հետբուհական մասնագիտական, հիմնական և լրացուցիչ կրթություն համապատասխան ուսումնական հաստատություններում՝ վճարովի հիմունքներով

**Հիմք՝** <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ԼՂՀ օրենք, Հոդված 6, կետ 2:

**47. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարների և մանկավարժների ատեստավորումը կազմակերպվում է՝**

- հինգ տարին մեկ

**Հիմք՝** <<Նախադպրոցական կրթության մասին>> ԼՂՀ օրենք հոդված 25, Էրրորդ պարբերություն:

**48. Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի երկարացված՝ մինչև 35 օր տևողությամբ (բացառիկ դեպքերում մինչև 48 օր տևողությամբ) ամենամյա արձակուրդի իրավունք ունեն**

**(նշե՛ք սխալ պատասխանը)**

- մատենադարանների, գրադարանների տնօրենները, փոխտնօրենները, գրադարանավարները, մատենագետները

**Հիմք՝** ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 160:

**49. Վաղ տարիքում երեխան շրջապատող աշխարհի հետ ծանոթանում է՝**

- զգայարանների միջոցով

**Հիմք՝** Այնքան ծանոթ և այնքան անծանոթ... մեր երեխան, Ձեռնարկ ծնողների համար, ՄԱԿ-ի գրասենյակ, <<Քայլ առ քայլ>> Բարեգործական հիմնադրամ, Երևան, 2006թ.:

**50. ՆՌԻՀ-ում ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքը կազմակերպում և վերլուծում է՝**

- մեթոդիստը՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալը

**Հիմք՝** ԼՂՀ ԿԳՆ 2011 թվականի 16 հունիսի N111-Ն հրաման, III բաժին:

**51. Ի՞նչ է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը.**

- կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի, նպատակների իրագործումը ցույց տվող ցուցանիշների կատարման ընդունված մակարդակն է

**Հիմք՝** Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ, ԼՂՀ ԿԳՆ հր. N 113, 13.06.11թ.:

**52. Դաստիարակի պարտականություններից են**

- պլանավորումը և սաների ուսուցումն ու դաստիարակությունը

**Հիմք՝** Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց:

**53. Օրական քանի՞ պարապմունք են անցկացնում ավագ խմբում**

- 15+1

**Հիմք՝** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ., Երևան:

**54. Ո՞ր ռեժիմային պահից հետո են անցկացնում պարապմունքները**

- նախաձաշից հետո

Հիմք՝ Կրթական համալիր ծրագիր, 1999թ.:

**55. Տարվա ընթացքում գրաձանաչությունից քանի՞ պարապմունք է նախատեսվում ավագ խմբում**

- 40

Հիմք՝ Վաղ գրաձանաչությունը ավագ խմբում, 2007թ. Երևան:

**56. Գրաձանաչության պարապմունքները քանի՞ թույլ տևողությամբ են անցկացվում ավագ խմբում**

- 25 - 30 թույլ

Հիմք՝ Վաղ գրաձանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում, 2007թ. Երևան:

**57. Մանկապարտեզի երեխաները սովորու՞մ են գրել տառերը**

- միացնում են ուրվագծերն ու ներկում

Հիմք՝ Վաղ գրաձանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում, 2007թ. Երևան:

**58. Գրաձանաչության պարապմունքի առաջնահերթ խնդիրներից մեկը**

- բառի հնչյունային վերլուծությունը

Հիմք՝ Վաղ գրաձանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում, 2007թ. Երևան:

**59. Դաստիարակի աշխատանքային օրը քանի՞ ռեժիմային պահերից է բաղկացած.**

- ընդունելություն, առավոտյան մարմնամարզություն, նախաձաշ, պարապմունքներ, զբոսանք, քուն, հետձաշիկ, խաղ-զվարձալիք, տուն- ձանապարհում

Հիմք՝ Նախադպրոցական հաստատության կառավարումը, 2008թ. Երևան:

**60. Դաստիարակի օգնականի աշխատանքային պարտականություններից են.**

- պահպանել սենյակների մաքրությունը, օգնել դաստիարակին, կատարել նրա հանձնարարությունները

Հիմք՝ Նախադպրոցական տարիքի երեխաների հիգիենա, Բ. Անջելյան, 1978թ., Երևան:

**61. Խմբերի խտությունը ըստ տարիքային առանձնահատկությունների՝ մինչև 1, 1-3 տ, 3-6տ**

- մինչև 1տ.՝ 10-15, 1- 3 տ.՝ 15-20, 3-6տ.՝ 25-30

Հիմք՝ ԼԴՀ ԿԳՆ նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի հաստիքացուցակ, 2007թ.:

**62. Ի՞նչ է ընդգրկվում դաստիարակի աշխատանքային պլանի մեջ**

- օրվա ռեժիմային պահերը

Հիմք՝ Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի աշխատանքային փաթեթ, մեթոդական ուղեցույց:

**63. Դաստիարակի օգնականը իրավունք ունի՞ պարապմունք անցկացնել**

- ոչ

Հիմք՝ Դաստիարակի օգնականի աշխատանքային պարտականությունները:

**64. Դաստիարակը պատասխանատու՞ է երեխաների առողջության համար**

- այո. բժշկական աշխատողների հետ համատեղ ապահովում է երեխաների առողջության ապահովումը

Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները:

**65. Ինչպես՞ վարվել կամակոր երեխայի հետ**

- ուսումնասիրել երեխայի անհատական առանձնահատկությունները, օգտագործելով բացատրական- համոզիչ մեթոդը

Հիմք՝ Նախադպրոցականի դաստիարակության հարցեր, Ա. Հովհաննիսյան, 2005թ. Երևան:

**66. Ծնողների հետ աշխատանքի ի՞նչ ձևեր կան.**

- ծնողական անկյուն, ծնողական ժողով, անհատական գրույց, ծնողների հետ սեմինարներ, այցելություն տներ, աշխատանք ծնողական կոմիտեի հետ

Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:

**67. Ո՞վ է վարում երեխաների հաճախումների մատյանը**

- դաստիարակը

Հիմք՝ Դաստիարակի աշխատանքային պարտականությունները:

**68. Ձմռանը երեխաներին տանու՞մ են գրոսանքի**

- այո

Հիմք՝ Նախադպրոցական տարիքի հիգիենան, Բ. Անջեյան, 1978թ. Երևան:

**69. Ո՞վ է անցկացնում օրինակելի պարապմունքը**

- դաստիարակը

Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները:

**70. Ավագ խմբում խոսքի զարգացումից և գրաճանաչությունից քանի՞ պարապմունք է նախատեսվում շաբաթվա ընթացքում**

- 4

Հիմք՝ Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

**71. Երեխայի բարեկիրթ վարքի կուլտուրայի դաստիարակման համար լավագույն միջոցը ո՞րն է**

- բարոյագիտական գրույցները

Հիմք՝ Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

**72. Ինչպիսի՞ մեթոդներով ու միջոցներով հասնել երեխաների էկոլոգիական դաստիարակությանը**



- դիտումների, էքսկուրսիաների, զբոսանքների, նկարչության, ծեփի պարապմունքների, բանաստեղծությունների, երգերի, հեքիաթի ընթերցումների, էկոլոգիական խաղերի միջոցով

**Հիմք`** Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, 2007թ. Երևան:

### **73. Ֆիզ դաստիարակության խնդիրները**

- առողջության պահպանում և ամրապնդում, օրգանիզմի կոփում, ձիշտ կեցվածքի ձևավորում, բարոյականային հատկանիշների որակական գծերի դաստիարակում, ֆիզիկական որակների ձևավորում

**Հիմք`** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

### **74.Օրվա ընթացքում դաստիարակը ինչքա՞ն ժամանակ պետք է հատկացնի շարժական խաղերին**

- 30 րոպեից ոչ պակաս

**Հիմք`** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

### **75.Որո՞նք են ֆիզ. դաստիարակության հիմնական շարժումները մանկապարտեզում**

- քայլ, վազք, ցատկ, նետում, մազլցում, սողանցում, հավասարակշռություն

**Հիմք`** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

### **76. Նկարչության պարապմունքների նպատակը**

- շրջապատող առարկայական աշխարհի ու երևույթների պատկերումն է երանգավորման և գրաֆիկական եղանակով

**Հիմք`** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

### **77. Պեղագիտական դաստիարակության կազմակերպման ինչպիսի՞ ձևեր կան**

- խաղ-պարապմունքներ, պարապմունքներ, վիկտորինաներ, տոնահանդեսներ, էքսկուրսիաներ

**Հիմք`** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

### **78.Ինչպիսի՞ կերպարվեստային պարապմունքներ են անցկացվում մանկապարտեզում**

- նկարչության, ծեփի, ալիկացիայի, կառուցողական աշխատանքի

**Հիմք`** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ., Երևան:

### **79. Ի՞նչ է խաղը երեխայի կյանքում.**

- խաղը ինքնագնահատման, ինքնաճանաչման ասպարեզ է, որը հնարավորություն է տալիս դրսևորել նախաձեռնություն, ճարպկություն, կոլեկտիվ հարմարվողականություն

**Հիմք`** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

### **80. Ինչպիսի՞ խաղեր են կազմակերպվում մանկապարտեզում**

- սյուժետադերային, խաղ-բեմականացում, շարժախաղ, դիդակտիկ խաղ, ինտելեկտուալ խաղ, ազատ խաղ, խաղ զվարճալիքներ

**Հիմք`** Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ., Երևան:

**81. Որո՞նք են աշխատանքային դաստիարակության ձևերը**

- հանձնարարություններ, հերթապահություն, ընդհանուր աշխատանք, ինքնասպասարկում, առարկայական -գործնական աշխատանք, ձեռքի աշխատանք  
Հիմք՝ Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր, 1999թ., Երևան:

**82. Ձեռքի աշխատանքների տեսակները**

- կտորով, թելով, բնական նյութերով, ապլիկացիա, փայտով, կավով, արհեստական նյութերով  
Հիմք՝ Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր, 1999թ. Երևան:

**83. Ի՞նչ գրավիչ ժամանցներ գիտեք**

- մարզական զվարճություններ, տոնահանդեսներ

Հիմք՝ Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր, 1999թ. Երևան:

**84. Ի՞նչ է պահանջում յուրաքանչյուր երեխա դաստիարակից**

- անհատական մոտեցում, հավասար իրավունքներ

Հիմք՝ Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

**85.Շաբաթական քանի՞ պարապմունք է անցկացվում 4-5 տարեկանների խմբում**

- 12 պարապմունք

Հիմք՝ Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼԴՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**86.Վերադաս մարմիններից ստացված կանոնակարգը (ռեժիմը) պարտադիր ուղեցույժ է բոլոր մանկապարտեզների համար**

- յուրաքանչյուր մանկապարտեզ պետք է կազմի իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան ռեժիմ, ունենալով օրինակելի ռեժիմի տարբերակը

Հիմք՝ Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼԴՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**87.Որո՞նք են պարապմունքից դուրս անցկացվող աշխատանքի ձևերն ու միջոցները**

- տոներ, զրույցներ, ժամանցներ, ավանդույթներ, ցուցահանդեսներ, գեղարվեստական գրականություն, խաղեր

Հիմք՝ Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼԴՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**88. Միջին խմբում որո՞նք են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման բաժինները.**

- քանակ և հաշիվ, մեծություն, ձև, տարածության մեջ կողմնորոշում, ժամանակի մեջ կողմնորոշում

Հիմք՝ Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼԴՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**89. Միջին խմբում մինչև ո՞ր թվանշաններին են ծանոթանում երեխաները**

- 1-5

Հիմք՝ Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼԴՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**90. Տարրական մաթեմատիկայից միջին խմբում տարեկան քանի՞ պարապմունք է նախատեսվում**

- տարեկան 36

**Հիմք՝** Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼՂՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**91. Տարրական մաթեմատիկայի պարապմունքները միջին խմբում քանի՞ տեսակ են լինում**

- համընդհանուր և համակցված

**Հիմք՝** Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼՂՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**92. Ի՞նչ մասերից է բաղկացած միջին խմբի երաժշտության պարապմունքը**

- ներգրավիչ, հիմնական, ամփոփիչ

**Հիմք՝** Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼՂՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**93. Ծրագրից դուրս ընդգրկված երգերը ու՞մ կողմից են հաստատվում**

- ԿԳ նախարարության հանձնաժողովի կողմից

**Հիմք՝** Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր, ԼՂՀ ԿԳՆ, ԱԻ, 2011թ.:

**94. Ի՞նչ տեսակներ ունեն դիդակտիկ խաղերը**

- խոսքի զարգացման, երաժշտական, մաթեմատիկական, բնագիտական

**Հիմք՝** Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում, ԼՂՀ ԿԳՆ, ԱԻ, 2007թ.:

**95. Ի՞նչ պետք է պահպանել խաղերի ընթացքում**

- կանոնները

**Հիմք՝** Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում, ԼՂՀ ԿԳՆ, ԱԻ, 2007թ.:

**96. Պայմանների առկայության դեպքում կարճաժամկետ խմբերի քանի՞ հերթափոխ կարելի է ունենալ**

- 2- 3 հերթափոխ

**Հիմք՝** Աշխատանքի կազմակերպումը նախադպրոցական հաստատությունների կարճաժամկետ խմբերում, Ա. Հովհաննիսյան, Մ. Սարգսյան, 2008թ.:

**97. Ո՞րն է նախադպրոցական հաստատության հիմնական խնդիրը**

- բարելավել ընտանիքի և հասարակության պահանջը երեխայի ներդաշնակ զարգացման գործում

**Հիմք՝** Նախադպրոցական հաստատության կառավարումը, Ա. Հովհաննիսյան, 2008թ.

Երևան:

**98. Ո՞րն է երեխայակենտրոն ուսուցումը**

- բացահայտել յուրաքանչյուր երեխայի անկրկնելիությունն ու անհատականությունը

**Հիմք՝** Դպրոցի շեմին, Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:

**99. Ի՞նչ է ինտերակտիվ մեթոդը**

- ուսուցանել երկխոսության միջոցով

**Հիմք՝** Դպրոցի շեմին, Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:

**100. Ինչպիսի՞ պարապմունքներ են կազմակերպվում խառը խմբերում**

- պարապմունք ամբողջ խմբի հետ, պարապմունք ենթախմբերով, պարապմունք ավագ տարիքային խմբերի հետ

Հիմք՝ Դպրոցի շեմին, Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան: